ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

17.01.2020 թ.
Արձանագրություն թիվ 4

1. 2019-2020 ուսումնական տարվա սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ուսումնական պարապմունքներին ուսանողների հաճախումների և անհարգելի բացակայությունների վերաբերյալ.

1.1. 2019-2020 ուսումնական տարվա սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին առարկաների ուսումնական պարապմունքներից 50 % և ավելի (12 կրեդիտից ավելի) անհարգելի բացակայություններ ունեցող ՀԱԱՀ տարբեր ֆակուլտետների (քոլեջների) ուսանողներին ներկայացնել հեռացման, այդ թվում՝ պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետից՝ 5, ագրարային ճարտարագիտության ֆակուլտետից՝ 4, անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետից՝ 1, ինչպես նաև Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջից՝ 2 ուսանող:

Ա.Ե. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի առկա անվճար ուսուցման 2019-2020 ուսումնական տարվա «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ավտոտրանսպորտում)» մասնագիտության (9-րդ դասարանի հիմքով) 3-րդ կուրսի ուսանող՝ **Ռոբերտ Գևորգի Մարկոսյանին**, սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում անհարգելի բացակայություններ ունենալու պատճառով **հեռացնել քոլեջից**:

Ա.Ե. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի առկա անվճար ուսուցման 2019-2020 ուսումնական տարվա «Պաշտպանված գրունտի կենսատեխնոլոգիա» մասնագիտության (9-րդ դասարանի հիմքով) 2-րդ կուրսի ուսանող **Արման Վարդանի Դիլանյանին հեռացնել քոլեջից**՝ 1-ին կիսամյակում առարկայական ծրագրերով նախատեսված երեք առարկաների ստուգարքները չստանալու պատճառով:

Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի 2019-2020 ուսումնական տարվա «Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» մասնագիտության 2-րդ կուրսի վճարովի ուսուցման համակարգի ուսանող **Աղվան Ատոմի Հակոբյանին** 18 կրեդիտ առարկայական պարտք ունենալու պատճառով **հեռացնել համալսարանից**:

Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի 2019-2020 ուսումնական տարվա «Գյուղատնտեսության էլեկտրիֆիկացիա և ավտոմատացում» մասնագիտության 1-ին կուրսի վճարովի ուսուցման համակարգի ուսանողուհի **Էլեն Էդիկի Կարապետյանին** 23 կրեդիտ առարկայական պարտք ունենալու պատճառով **հեռացնել համալսարանից**:

Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի 2019-2020 ուսումնական տարվա «Հողաբարելավում, հողային և ջրային պաշարների օգտագործում, հիդրոտեխնիկական կառուցվածքներ» մասնագիտության 1-ին կուրսի վճարովի ուսուցման համակարգի ուսանող **Մարտին Վռամի Մարկոսյանին** 20 կրեդիտ առարկայական պարտք ունենալու պատճառով **հեռացնել համալսարանից**:

Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա «Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» մասնագիտության 1-ին կուրսի վճարովի ուսուցման համակարգի ուսանող **Հովհաննես Արթուրի Սիմոնյանին** ակադեմիական պարտքը սահմանված ժամկետում չհանձնելու պատճառով **հեռացնել համալսարանից**:

Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն» մասնագիտության 2019-2020 ուսումնական տարվա 1-ին կուրսի վճարովի համակարգի ուսանող **Գևորգ Հովհաննեսի Մադաթյանին** 1-ին կիսամյակում 15 կրեդիտ ակադեմիական պարտք ունենալու պատճառով **հեռացնել համալսարանից**:

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության 2019-2020 ուսումնական տարվա ‹‹Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում›› կրթական ծրագրի 2-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանող **Ասատուր Ալեքսանի Ասատրյանին** 29 կրեդիտ առարկայական պարտք ունենալու պատճառով **հեռացնել համալսարանից:**

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի «Տեքստիլ և թեթև արդյունաբերության նյութերի և արտադրանքների տեխնոլոգիա» մասնագիտության 2019-2020 ուսումնական տարվա ‹‹Գյուղատնտեսության և պարենային ապրանքի փաթեթավորման տեխնոլոգիա և դիզայն›› կրթական ծրագրի 3-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանող **Հակոբ Ռաֆիկի Խուրշուդյանին** 16 կրեդիտ առարկայական պարտք ունենալու պատճառով **հեռացնել համալսարանից:**

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի «Տեքստիլ և թեթև արդյունաբերության նյութերի և արտադրանքների տեխնոլոգիա» մասնագիտության 2019-2020 ուսումնական տարվա ‹‹Կաշվի և մորթու արտադրանքի տեխնոլոգիա›› կրթական ծրագրի 4-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանող **Սարգիս Արսենի Ենգիբարյանին** 17 կրեդիտ առարկայական պարտք ունենալու պատճառով **հեռացնել համալսարանից:**

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության 2019-2020 ուսումնական տարվա ‹‹Մսի և մսամթերքի տեխնոլոգիա›› կրթական ծրագրի 3-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանող **Հայկ Սուրենի Հովհաննիսյանին** 13 կրեդիտ առարկայական պարտք ունենալու պատճառով **հեռացնել համալսարանից**:

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի Պարենամթերքի տեխնոլոգիա մասնագիտության 2019-2020 ուսումնական տարվա ‹‹Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում›› կրթական ծրագրի 3-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանող **Էմիլ Արթուրի Ավետիսյանին,** 13 կրեդիտ առարկայական պարտք ունենալու պատճառով, **հեռացնել համալսարանից**:

1.2. 2019-2020 ուսումնական տարվա սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին առարկաների ուսումնական պարապմունքներից 50 % և ավելի (12 կրեդիտից ավելի) անհարգելի բացակայություններ ունեցող ՀԱԱՀ առաջին կուրսերի ուսանողների հեռացման հարցին անդրադառնալ զորակոչի ավարտից հետո:

1.3. ***Ագրոնոմիական ֆակուլտետի*** 2019/2020 ուսումնական տարվա առկա ուսուցման ներքոհիշյալ ուսանողներին 1-ին կիսամյակում դասավանդվող մեկ և ավելի առարկաների ընդհանուր ժամաքանակից 50 % և ավելի անհարգելի բացակայելու պատճառով, բացառության կարգով, հայտարարել խիստ նկատողություն և թույլատրել մասնակցել քննաշրջանին.

1. *Տոնոյան Արմեն Տիգրանի - Ա 5*
2. *Դաշտոյան Պարգև Արամի - Ա 5*
3. *Քոչարյան Նարեկ Տարոնի - Աէ 5*
4. *Միրզոյան Կառլեն Արթուրի - ԱՏ 5*
5. *Նաջարյան Նովլետ Արաքսի - ԱՏ 5*

1.4. Առարկայի (կամ առարկաների) ուսումնական պարապմունքներից 50 % և ավելի անհարգելի բացակայություններ ունեցող ուսանողների համար տվյալ առարկան (կամ առարկաները) ձևակերպել պարտք և կազմակերպել կուրսի կրկնության դասընթացներ, եթե պարտքը չի գերազանցում ակադեմիական 12 կրեդիտի շեմը:

1.5. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին ուսանողների հետ (հատկապես ռիսկային խմբում գտնվող) անցկացնել բացատրական աշխատանքներ՝ անհարգելի բացակայությունները նվազագույնի հասցնելու համար, ինչպես նաև կարևորել առարկայի (առարկաների) կուրսի կրկնությունը հաջորդ կիսամյակում կազմակերպելու նպատակահարմարությունը:

1.6. Ակադեմիական 12 կրեդիտից պակաս պարտքերով հաջորդ կիսամյակ փոխադրված ուսանողների առարկայական պարտքերի դասընթացների կազմակերպման նպատակով դիմումներն ընդունել մինչև 2020 թ. փետրվարի 1-ը և 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում՝ դասերի ավարտից հետո, կազմակերպել կուրսի կրկնության դասընթացներ՝ ըստ սահմանված կարգի և գրաֆիկի. խմբերում ընդգրկել 8-12 ուսանող: Պետք է լրացնել դասաժամերի առնվազն 50 %-ը: Ավելի փոքր խմբերի ձևավորման նպատակահարմարությունը, բացառիկ դեպքերը լրացուցիչ քննարկել դեկանատների և ուսումնական գործընթացի կառավարման վարչության հետ:

2. ՀԱԱՀ 90-ամյակի հոբելյանական միջոցառումների իրականացման նախնական պլանի, միջոցառումների ցանկի, ժամանակացույցի վերաբերյալ.

Ամփոփել ՀԱԱՀ 90-ամյակի հոբելյանական միջոցառումների ցանկը, ժամանակացույցը՝ նշելով միջոցառումը, իրականացման ժամկետը, պատասխանատուներին կամ ստորաբաժանումը, տալ ֆինանսական նախնական գնահատական և հաջորդ շաբաթվա ընթացքում քննարկել կազմ. կոմիտեի նիստում:

3. Հեռակա ուսուցման դեպարտամենտի ուսանողների առարկայական պարտքերի վերահանձնման, ուսման վարձավճարների մարման և ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից կամ մարտական հերթապահություն իրականացրած ուսանողների ուսման վարձավճարների զեղչերի սահմանման վերաբերյալ.

3.1. Հեռակա ուսուցման դեպարտամենտի ուսանողների համար առարկայական պարտքերի վերահանձնման վերջնաժամկետ սահմանել 2020 թ. փետրվարի 15-ը:

3.2. Հանձնարարել հեռակա ուսուցման դեպարտամենտի պետ Հ. Հարությունյանին՝ 2020 թ. հունվարի 20-24-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպել ՀՈՒԴ-ի գիտական խորհրդի նիստ՝ ՀԱԱՀ ամբիոնների վարիչների մասնակցությամբ և քննարկել առարկայական պարտքերի հանձնման գործընթացը՝ որպես պատասխանատու նշանակելով ամբիոնների վարչներին:

3.3. Հանձնարարել դեկաններին և ուսումնական գործընթացի կառավարման վարչության պետ Դ. Հայրապետյանին՝ հաշվապահությունից ճշտել ֆակուլտետների ուսանողների ուսման վարձավճարների պարտքերի չափը և 3 օրվա ընթացքում ներկայացնել ռեկտոր Վ. ՈՒռուտյանին:

3.4. 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսման վարձավճարի զեղչերի դիմումների ընդունման վերջնաժամկետ սահմանել ս.թ. փետրվարի 28-ը:

3.5. Հեռակա ուսուցման դեպարտամենտի վճարովի համակարգի քառօրյա պատերազմի ժամանակ մարտական գործողության մասնակից 2019-2020 ուսումնական տարվա ներքոհիշյալ ուսանողների համար սահմանել տարեկան ուսման վարձի զեղչ 50 %-ի չափով:

Հ/հ	*Ազգանուն, անուն, հայրանուն*	*Մասնագիտ., կուրս*
1	Ներսիսյան Հովիկ Արայի	Փոխ. և ճան. երթ. - 3
2	Գրիգորյան Դավիթ Արմենի	Կենս. անվտանգ. - 2
3	Ավագյան Արմեն Վարդանի	Հողաբար. - 3
4	Պարույրյան Հակոբ Մարտինի	Գյուղ. էլ. - 4
5	Այվազյան Արեգ Սանասարի	Խմորմ. արտ. տեխն. - 3
6	Սարգսյան Վաղինակ Կարապետի	Խմորմ. արտ. տեխն. - 3
7	Ներսիսյան Հարություն Հովհաննեսի	Հողշին. - 5
8	Սարոյան Աղասի Վահանի	Գյուղ. մեք. - 5
9	Հովհաննիսյան Էդգար Վահրամի	Գյուղ. մեք. - 3

10	Ղամոյան Վաղարշակ Կամոյի	Գյուղ. մեք. - 3
11	Սարիբեկյան Գրիգոր Սուրենի	Գյուղ. մեք. - 4
12	Նանայան Աշոտ Արմենի	Ֆինանս. - 4
13	Մովսիսյան Վահե Վահագնի	Հացի տեխն. - 4
14	Ռուսյան Մկրտիչ Արթուրի	Ան. բուժ. - 3
15	Մարտիրոսյան Ռուբեն Հովհաննեսի	Գյուղ. հումք - 5
16	Բալյան Հարություն Վարդանի	Ագրոնոմիա - 1
17	Ահարոնյան Սերգեյ Հրայրի	Գյուղ. հումք - 1

Հեռակա ուսուցման դեպարտամենտի վճարովի համակարգի քառօրյա պատերազմի ժամանակ մարտական հերթապահություն իրականացրած ներքոհիշյալ ուսանողների համար սահմանել տարեկան ուսման վարձի զեղչ 30 %-ի չափով:

Հ/հ	***Ազգանուն, անուն, հայրանուն***	***Մասնագիտ., կուրս***	***ՈՒս. տարի***
1	Խուդոյան Հակոբ Հմայակի	Ապրանք. - 2	2018-2019
2	Կարապետյան Ռաֆիկ Արթուրի	Ֆինանս. - 3	2018-2019
3	Կիրակոսյան Հայկ Հակոբի	Ֆինանսներ - 1	2018-2019 2-րդ կիսամ.
4	Նավասարդյան Նարեկ Սամվելի	Խմորման. արտ. տեխն. - 4	2019-2020
5	Մնացականյան Էդգար Սարգսի	Կենս. անվտ. - 1	2019-2020
6	Գալոյան Հայկ Տիգրանի	Ագրոէկոլոգ. - 1	2019-2020
7	Կիրակոսյան Սահակ Արթուրի	Գյուղ. էլ. - 1	2019-2020
8	Ավետիսյան Վանիկ Հովհաննեսի	Ան. բուժ. - 4	2019-2020
9	Սարգսյան Սերոբ Առաքելի	Ագրոնոմիա - 2	2019-2020
10	Մարաբյան Ալբերտ Մուշեղի	Գյուղ. հումք - 4	2019-2020
11	Սահակյան Ավետիք Կառլենի	Կենս. անվտ.- 3	2019-2020
12	Աճեմյան Հայկ Թադևոսի	Փոխ. և ճեկ. - 3	2019-2020
13	Մկրտչյան Ռուբեն Արագածի	Գյուղ. էլ. - 4	2019-2020
14	Սաֆարյան Նարեկ Վահանի	Հողշին. - 3	2019-2020

4. ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղի «Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապետում» մասնագիտության 1-ին կուրսի ուսանող, ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից Գոռ Գառնիկի Զուրաբյանի ուսման վարձավճարի զեղչի վերաբերյալ.

ՀԱԱՀ-ի Վանաձորի մասնաճյուղի հեռակա ուսուցման 2019-2020 ուսումնական տարվա «Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում» մասնագիտության 1-ին կուրսի ուսանող, 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից **Գոռ Գառնիկի Զուրաբյանի** 2019-2020 ուսումնական տարվա **ուսման վարձը զեղչել 50 %-ով**:

5. ԲՈՒՀ-երի դիմորդների համար ՀԱԱՀ-ում կազմակերպվող ընդունելության քննությունների 4-ամսյա նախապատրաստական անվճար դասընթացների վերաբերյալ.

Հանձնարարել ուսումնական գործընթացի կառավարման վարչության պետ Դ. Հայրապետյանին.

- կազմել հայտարարություն ՀԱԱՀ-ում ընդունելության քննությունների 4-ամսյա նախապատրաստական անվճար դասընթացների կազմակերպման վերաբերյալ՝ ռադիոյով հայտարարելու, dasaran.am կրթական հարթակում տեղադրելու համար,

- հանդիպում կազմակերպել ՀԱԱՀ հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի աշակերտների հետ և ներկայացնել ընդունելության քննությունների 4-ամսյա նախապատրաստական անվճար դասընթացներն ու մասնակցության ձևաչափը:

6. ՀԱԱՀ-ի մագիստրոսի և հետազոտողի աստիճանների ուսումնական պլանների վերանայման և դրանց արմատական բարեփոխման գործընթացի մեկնարկի վերաբերյալ.

Հանձնարարել դեկաններին՝ մինչև 2020 թ. փետրվարի 15-ը ներկայացնել հաստատված շիֆրերով մագիստրոսի և հետազոտողի աստիճանների ուսումնական պլանների վերանայված նախնական տարբերակները՝ կարևորելով հատկապես հետազոտական մեթոդաբանությունը, մասնագիտական, ինչպես նաև հետազոտական, վերլուծական հմտություններ ձևավորող առարկաները:

7. ՀԱԱՀ թեստավորման կենտրոնի փորձարկման և թեստային համակարգով կազմակերպված պիլոտային քննությունների արդյունքների վերաբերյալ.

7.1. Հանձնարարել դեկաններին, ամբիոնի վարիչներին.

- հեռակա ուսուցման դեպարտամենտի առաջին կուրսերի բոլոր առարկաների համար սեղմ ժամկետներում ներկայացնել թեստեր և քննություններն (ստուգարքները) անցկացնել թեստերով (համակարգչային կամ թղթային տարբերակով)՝ ուսանողների անունների փոխարեն նշելով ստուգարքային գրքույկների համարները:

- շարունակաբար բարձրացնել թեստերի որակը և բարդությունը:

7.2. Հանձնարարել SS կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին՝ ՀՈՒԴ առաջին կուրսերի ուսանողների քնությունների մեկնարկից 20-30 րոպե առաջ քննության մասնակից ուսանողների թվով տպել թեստեր և տրամադրել ամբիոնի վարիչներին: Անհրաժեշտության դեպքում քննություններ կազմակերպել նաև շաբաթ օրերին:

8. Erasmus+ միջազգային շարժունության ծրագրի շրջանակներում արտերկրի համալսարաններում վերապատրաստված ՀԱԱՀ դասախոսական

անձնակազմի վերադարձից հետո փորձի փոխանակման և ձեռքբերված հմտությունների կիրառման, ներդրման անհրաժեշտության վերաբերյալ.

Հանձնարարել ՈԳԱ կենտրոնի տնօրեն Մ. Մովսիսյանին, իրավաբանական բաժնի պետ Ն. Եղիազարյանին, ուսումնական գործընթացի կառավարման վարչության պետ Դ. Հայրապետյանին, միջազգային կապերի դեպարտամենտի պետ Գ. Համբարձումյանին՝ մշակել միջազգային շարժունության և վերապատրաստման ծրագրերի շրջանակներում ՀԱԱՀ աշխատակիցների կողմից ձեռքբերված գիտելիքի, կարողությունների և հմտությունների ներդրման, արդյունքների գնահատման հայեցակարգ:

9. ՀԱԱՀ-ում իրականացվող գույքագրման գործընթացի վերաբերյալ.

9.1. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին և գլխավոր հավապահ Ա. Հայրապետյանին.

- գույքագրման ավարտից հետո ճշգրտել ստորաբաժանումներում առկա գույքի անվանումները և համապատասխան զեկուցագրերով ներկայացնել հաշվապահություն,

- անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր ստորաբաժանման գույքը խմբավորել մեկական ընդհանուր գույքացուցակում (հիմնական միջոցներ և պաշարներ),

- ստորաբաժանումից դուրսբերվող գույքը փաստաթղթերով խմբավորել որպես դուրսգրման ենթակա կամ որպես ստորաբաժանմանը ոչ անհրաժեշտ գույք:

9.2. Հանձնարարել գույքագրման հանձնաժողովին և տնտեսական վարչությանը՝ ուսումնասիրել ստորաբաժանումներից դուրսբերված գույքի պիտանելիությունը և կայացնել համապատասխան որոշում՝ այլ ստորաբաժանումների տրամադրելու, դուրս գրելու և որպես պահեստամաս օգտագործելու կամ դուրս գրելու ու աղբավայր տեղափոխելու վերաբերյալ:

10. Համալսարանի ներքին շրջանառության Mulberry համակարգով փաստաթղթերի վիզավորումների վերաբերյալ.

Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ համալսարանի ներքին շրջանառության Mulberry համակարգի հետ կապված բոլոր փաստաթղթերի վիզավորումները կատարել առավելագույնը 2 օրվա ընթացքում:

11. ՀԱԱՀ-ի «Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, մելիորացիայի և ագրոքիմիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի Երասխահունի ուսումնափորձնական բազայում և բազային տնտեսություններում (Սպիտակ, Բջնի) իրականացվող գյուղատնտեսական աշխատանքներին համալսարանի ուսանողների և դասախոսական անձնակազմի մասնակցության վերաբերյալ.

11.1. Հանձնարարել «Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, մելիորացիայի և ագրոքիմիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի տնօրեն Գ. Գասպարյանին և դեկաններին՝ մշակել, ուսումնական գործընթացի կառավարման վարչության հետ քննարկել Երասխահունի ուսումնափորձնական բազայում ՀԱԱՀ ուսանողների պրակտիկաների անցկացման ժամանակացույցը:

11.2. Հանձնարարել դեկաններին և ամբիոնի վարիչներին՝ պրակտիկաների մեկնելուց առաջ ուսանողների հետ բացատրական աշխատանքներ անցկացնել համապատասխան հանդերձանքի վերաբերյալ և խստիվ վերահսկել պրակտիկաներին ուսանողների անմիջական մասնակցությունն ու պատշաճ ներգրավվածությունը:

12. ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի ուսանողների համար առարկայական պարտքերի երկրորդ վերահանձնում կազմակերպելու վերաբերյալ.

Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի ուսանողներին ս.թ. փետրվարի 3-7-ը թույլատրել մասնակցել առարկայական պարտքերի երկրորդ վերահանձնմանը:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ